# Mercedes-Benz

## ավտոմոբիլի ապագան

Այսօր «Դայմլեր Քրայսլեր» կոնցեռնի գլխավոր ներկայացուցիչը Հայաստանում «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ն է, որը գործում է 2004 թվականի մայիս ամսից: Հաջորդելով Ինտերմոտոր ընկերությանը (որը Mercedes-Benz մակնիշի մեքենաների առաջին ներկրողն էր Հայաստան դեռեւս 1988 թվականից) «Ավանգարդ Մոթորս» ընկերությունը հանձն առավ հայ սպառողին հասցնել Mercedes-Benz մակնիշի նորագույն մոդելների մեքենաները եւ առհասարակ զարգացնել ավտոմոբիլային շուկան Հայաստանում:

Ընկերությունը Mercedes-Benz մակնիշի մեքենաների սիրահարներին առաջարկում է մարդատար եւ ուղեւորաբեռնատար մեքենաներ, օրիգինալ պահեստամասեր, անգամ Mercedes-Benz ապրանքանիշը կրող պարագաներ եւ հուշանվերներ: Այն նաեւ իրականացնում է վնասված եւ վթարված մեքենաների որակյալ տեխսպասարկում` ներառյալ թափքի նորոգման եւ ներկման ծառայությունները` համապատասխան միջազգային չափանիշներին:

Ընկերությունը գնալով ընդլայնում է իր վաճառքի ծավալները` սպառողին ընձեռելով ընտրության ավելի ու ավելի լայն հնարավորություններ: 2006 թ. ընթացքում ընկերությունը նախատեսում է իրականացնել ավելի քան 60 մեքենայի վաճառք Հայաստանում:

«Ավանգարդ Մոթորս» ընկերությունը պարբերաբար իր սպառողին է ներկայանում նորույթներով եւ նորամուծություններով: 2005 թվականի ընթացքում Mercedes-Benz-ը թողարկել է 6 նոր դասի մեքենաներ` M, CLS, SLK, S, B, R, որոնցից առաջին երեքի շնորհանդեսն արդեն կազմակերպվել է ընկերության սրահում, իսկ հաջորդ երեքը նախատեսվում է իրականացնել շատ մոտ ապագայում:



Հոկտեմբեր ամսին «Ավանգարդ Մոթորս»-ի ներկայացուցիչները կմեկնեն Ֆրանկֆուրտ` ներկա գտնվելու S դասի շնորհանդեսի արարողությանը, որից հետո վերադառնալով Հայաստան` այստեղ կկազմակերպեն վերոհիշյալ դասի մեքենայի շնորհանդեսը այժմ արդեն հայաստանաբնակ սպառողների համար:

Ի ուրախություն իր սպառողի` «Ավանգարդ» Մոթորս» ՍՊԸ-ն նախատեսում է մեքենա գնած իր յուրաքանչյուր հաճախորդին տրամադրել Mercedes-Benz ապրանքանշանով պլաստիկ քարտ, որը քարտապանին հնարավորություն կտա օգտվել թե՛ բանկի եւ թե՛ ընկերության կողմից ընձեռած հատուկ զեղչային առավելություններից:




Եվս մեկ հաճելի անակնկալ Mercedes-Benz մակնիշի ավտոմոբիլասիրահարներին. 2006 թ.-ից սկսած Ավանգարդ Մոթորս ընկերությունը մեքենաների ապառիկ վաճառքն իրականացնելու է տեղում: Ընկերությունը կիրառելով «մեկ պատուհանի սպասարկման» ձեւը` հաճախորդին հնարավորություն է տալիս խնայել ժամանակ` բանկում իրականացվելիք նախնական փաստաթղթային ձեւակերպումներն իրականացնելով տեղում:

**Երեւան,**
**Գայի պողոտա 14/3**
**հեռ:66 88 00**
**Ֆաքս: 66 89 00**
**www.mercedes-benz.am**
**էլ. փոստ: tigran-hovhannisyan@mercedes-benz.am**




# Կհանդիպենք




Lycos ընկերության առաջարկած ժամադրավայրը ինտերնետն է, ուր այսօր այցելում են գրեթե բոլորը, ինչը նշանակում է, որ Lycos-ն առնչվում է յուրաքանչյուրիս:

Lycos Armenia-ն եվրոպական առաջատար ինտերնետային ընկերություններից մեկի մշակումների կենտրոնն է: Արտադրանքը, որն առաջարկում է Lycos-ը, կապված է ինտերնետի եւ ժամանցի հետ. հաղորդակցում, որոնում, գնումներ, վեբ ժամադրություն, վեբ տարածքի տրամադրում, առցանց գովազդ եւ այլն: Առաջարկվող տեսականին թարմ է, հուսալի է եւ դյուրին` օգտագործման մեջ:

Lycos-ի արտադրանքի հետ ամսական առնչվում է շուրջ 25 միլիոն օգտագործող: Գյուտերսլոյում, Մյունխենում, Համբուրգում, Դյուսելդորֆում, Կոպենհագենում, Լոնդոնում, Մադրիդում, Միլանում, Ամստերդամում, Մոսկվայում եւ Երեւանում գործող Lycos ընկերության ներկայացուցչություններում աշխատում է մոտավորապես 900 մարդ, որոնք ձեւավորում եւ զարգացնում են Lycos շուկան, սպառողին առաջարկում բարձրակարգ արտադրանք եւ նոր գաղափարներ` այսպիսով հերթական անգամ ապացուցելով, որ Lycos-ի ապրանքանիշը որակի չափանիշ է ողջ Եվրոպայում:

2004 թ ընթացքում Lycos ընկերությունում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ: Ընկերության ստոկհոլմյան գրասենյակը, կրճատելով իր որոշ բաժիններ եւ նվազեցնելով իր աշխատակիցների քանակը` վերածվեց տվյալների կենտրոնի, միաժամանակ որոշ աշխատանքների իրականացումը տեղափոխվեցին Երեւան, բացվեցին նոր աշխատատեղեր` ընդլայնելով գործունեության շրջանակները եւ նախաձեռնելով նորանոր ծրագրերի իրականացում: Ծրագրերի մշակման տեսակետից Lycos Armenia-ն այժմ առաջատար դիրքում է. Lycos-ի բազմաթիվ արտադրատեսակներ մասնակիորեն կամ ամբողջությամբ ծրագրավորվում են հայ մասնագետների կողմից:

Հիշեցնենք, որ Lycos Armenia-ն իր գործունեությունը սկսել է 2002 թ. օգոստոս ամսին, երբ Lycos ընկերությունը գնեց «Բրիենս Արմենիա» ընկերությունը եւ վերանվանեց այն Lycos ՓԲԸ-ի: Այս պահին Lycos Armeniaում աշխատում է շուրջ 215 մարդ, որոնց թիվը 2006 թ. վերջին նախատեսվում է հասցնել մինչեւ 250-ի:

Lycos Armenia մուտք գործող customer care, shopping, monitoring, support team, shopping test եւ այլ նոր բաժիններին զուգահեռաբար ծնվում է կադրերի պատրաստման բնական պահանջարկը: Lycos Armenia-ն հոգում է եւ այս մասին: Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանում հիմնադրած լաբորատորիայում ուսանողների մի խմբի հետ իրականացրած ֆակուլտատիվ աշխատանքերից հետո Lycos Armenia-ն իր տարբեր ծրագրում ձեռք բերեց բազմաթիվ նոր աշխատակիցներ: Այս հաջողված ծրագրին հաջորդեցին նաեւ նմանատիպ այլ ծրագրեր ոչ միայն ճարտարագիտական, այլ նաեւ Երեւանի պետական համալսարանում:

Քանի որ Lycos Armenia-ի նպատակը ոչ միայն սեփական ընկերության, այլ նաեւ ողջ Հայաստանի համար ոլորտի որակյալ մասնագետների պատրաստումն ու աշխատանքով ապահովումն է, ընկերությունը ավելի հեռահար պլաններ է նախագծում ուսումնական դասընթացների կազմակերպման առումով: Lycos Armenia-ն կազմակերպում է երկամյա դասընթացներ արտասահմանում բակալավրի եւ մագիստրոսի որակավորման հնարավորությամբ:

**Երեւան**
**Ա. Մանուկյան 9, III հարկ,**
**Հեռ: 51 20 26, 51 20 25**
**Ֆաքս: 51 21 12**
**Էլ. փոստ: info@armendev.am**
**www.lycos-europe.com**
**Lycos Armenia**



# «Ֆրեզենիուս Մեդիքլ Քեյր» ընկերության նոր կենտրոնի բացումը Վանաձորում

«Ֆրեզենիուս Մեդիքլ Քեյր» ընկերությունը համանուն ընկերության հայաստանյան ներկայացուցչությունն է, որը մասնագիտացված է բժշկական դեղանյութերի արտադրության մեջ: Բժշկական դեղեր արտադրող եւ այլ ընկերությունների արտադրության «արհեստական երիկամներ» մատակարարող փոքրիկ ընկերությունից ժամանակի ընթացքում «Ֆրեզենիուսը» վերածվեց «արհեստական երիկամների» սեփական սարքավորումներ արտադրող գերհզոր ընկերության:

Ներկայումս «Ֆրեզենիուսը» դիալիզի արտադրանքի եւ երիկամի փոխարինման թերապիայի գծով աշխարհի խոշորագույն մատակարարն է: Ընկերությունը ներկայացուցչություններ ունի աշխարհի ավելի քան 100 երկրներում, որտեղ աշխատում են 47 հազարից ավելի աշխատակիցներ:

Ֆրեզենիուսի SGS ինստիտուտը ոչ բժշկական լաբորատոր անալիզների գծով առաջատար մատակարարներից է: Այդ են վկայում ինստիտուտի 150-ից ավելի հավաստագրերը, լիազորագրերն ու վկայականները, ինչպես նաեւ անալիզների ոլորտում իր 155 տարվա փորձը: Ինստիտուտի անթերի գործունեության մասին են փաստում Գերմանիայի, ինչպես նաեւ այլ եվրոպական երկրներում այս ոլորտում աշխատող արտադրությունները, մանրավաճառները, ծառայություն մատուցող կազմակերպությունները եւ պարզապես հասարակ գնորդները: Ֆրեզենիուսի SGS ինստիտուտն իր վերլուծական եւ խորհրդատվական որակյալ ծառայության փորձով համարվում է ոլորտում հիմնախնդիր լուծող եւ խորհրդատու:

Հայաստանում «Ֆրեզենիուսի» ներկայացուցչությունը սկսել է գործել 1998 թվականից: Այսօր արդեն Հայաստանում գործող 5 դիալիզային կենտրոններին, որոնք համալրված են «Ֆրեզենիուսի» սարքավորումներով, ավելանալու է նաեւ Վանաձորում տեղակայվելիք եւս մեկ կենտրոն, որը կթեթեւացնի մարզերից տարբերաբար քաղաք մեկնող հիվանդների հոգսը եւ միաժամանակ սարքավորումների քանակի ավելացման շնորհիվ հնարավորություն կտա երկարացնելու երիկամային անբավարարությամբ տառապող հիվանդների կյանքը:

«Ֆրեզենիուսի» աշխատակիցները տարբերաբար այցելում են վերոնշյալ հիվանդանոցների համապատասխան բաժանմունքները եւ իրականացնում դիալիզային սարքավորումների ծառայողական սպասարկում: Հետաքրքրվելով առկա հիմնախնդիրներով՝ ընկերության աշխատակիցները աջակցում են կենտրոններին՝ դրանց շուտափույթ լուծում տալու հարցում:



Հայաստանում իր 7-ամյա գործունեության ընթացքում «Ֆրեզենիուսը» համագործակցելով տեղական հիվանդանոցների հետ՝ նրանցից ոմանց նվիրել է իր սարքավորումներից, անհրաժեշտության դեպքում անհատույց վերականգնել կամ նորոգել է սարքերը:

Երեւանի Մաշտոցի 6 հասցեում գտնվող «Ֆրեզենիուս Մեդիքլ Քեյր» ներկայացուցչության կողքին տեղակայված է ընկերության ընդարձակ պահեստը, ինչը հնարավորություն է տալիս դիալիզի համար անհրաժեշտ հումքը ստանալ անմիջապես տեղում:

Ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի վերապատրաստումն իրականացվում է Մոսկվայում եւ Գերմանիայում: Տեղական բժիշկները մասնակցում են եվրոպայի դիալիզային ասոցիացիայի ամենամյա կոնգրեսին: Հաճախ կազմակերպվում են նաեւ տարածաշրջանային սեմինարներ, որոնց մասնակցում են նաեւ Եվրոպայից եւ Ռուսաստանից ժամանած բժիշկներ ու պրոֆեսորներ:

*Երեւան,*
*Մաշտոցի 6, բն. 53*
*Հեռ./ֆաքս. 52 4554, 560943*
*Էլ. փոստ frese@armencell.am*

# «SALUTIFER»

# Հանքավան. բնական հանքային եւ աղբյուրի ջուր

Սալուտիֆերը հայ-գերմանական ընկերություն է, որը հիմնադրվել է 2005 թ. եւ նպատակ ունի արտադրելու եւ Արեւմտյան Եվրոպայի երկրներ արտահանելու շշալցված բնական հանքային ջրեր, որոնք եզակի են իրենց տեսակում եւ հարուստ են յոդով ու ֆտորով:

Սալուտիֆեր ընկերությունն իրականացնում է աշխատանքներ առողջարար ջրի տեսակների հայտնաբերման, հետազոտման եւ արտադրման ուղղությամբ: Այն հետազոտել է էկոլոգիապես ամենամաքուր շրջաններից մեկի՝ Փամբակ լեռան շրջանում գտնվող մոտ 130 աղբյուր:

Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս արտադրել 3 տեսակի ջուր՝ Ռոյալ Թեժ Սար, Ռոյալ Կլասիկ եւ Ռոյալ Լիթիում:

Ջրերից առաջինը բնական հանքային աղբյուրի ջուր է, որն ունի հանքայնություն եւ յոդի օպտիմալ քանակություն, կարող է օգտագործվել ցանկացած տարիքի անձանց կողմից:

Երկրորդը՝ Ռոյալ Կլասիկը, բնական գազով հագեցած աղբյուրի ջուր է եւ նախատեսված է նրանց համար, ովքեր գտնվում են մշտական շարժման մեջ, վարում են ակտիվ ապրելակերպ եւ կենսունակության բարձրացման կարիք ունեն:




Ռոյալ Լիթիումը բնական հանքային ջուր է եւ օգտակար է 40-ից բարձր տարիքի մարդկանց համար, ովքեր խնդիրներ ունեն նյութափոխանակության հետ:

Այս երեք տեսակի ջրերը տարբերվում են իրենց բնական զուլալությամբ եւ պարունակում են մարդկային մարմնի նյութափոխանակության համար անհրաժեշտ հիմնական միկրո- եւ մակրոտարրեր, ինչպես նաեւ հանքանյութերի անհրաժեշտ քանակություն:

Յոդի օպտիմալ բաղադրության պարունակությամբ Հանքավանի ջրերը եզակի են: Դրանք չեն մշակվում քիմիական միջոցներով, բիոլոգիապես մաքուր են եւ իրենց բաղադրության մեջ չեն պարունակում վնասակար տարրեր:

Այս ջրերի լավագույն հատկությունները օգտակար են հատկապես նրանց համար, ովքեր պայքարում են ծերացման, յոդի պակասության, բարձր ճնշման, սրտային հիվանդությունների, խրոնիկ հոգնածության, սուր գլխացավի, գլխի վնասվածքների, փորկապության, աթերոսկլերոզի, հղիության հետ կապված խնդիրների, հոգեկան խանգարումների, ալկոհոլիզմի եւ այլնի դեմ:

Հանքավանի բնական աղբյուրի ջրերը որակավորված եւ հաստատված են այնպիսի հայտնի հաստատությունների կողմից, ինչպիսիք են՝ գերմանական ISEGA, LGL եւ հայկական ԱԿՖԱՐ լաբորատորիաները, ինչպես նաեւ Բավարիայի առողջապահության եւ սննդի տարածքային գրասենյակն ու բնապահպանության վարչության լաբորատորիան Արաբական Էմիրություններում:

Սալուտիֆեր ընկերությունը հետագայում նպատակ ունի Կոտայքի մարզի Հանքավան գյուղում հիմնադրել գործարան՝ մանուկների եւ նորածինների համար հատուկ Ռոյալ Թեժ Սար շշալցված աղբյուրի ջուր արտադրելու համար եւ կառուցելու ՌՈՅԱԼ բժշկական առողջարան՝ ֆիզիոթերապեւտիկ բուժում իրականացնելու նպատակով:

*ք. Հրազդան,*
*Կարմիր բանակի 3,*
*Հեռ. 0223 62727*
*Էլ. փոստ info@salutifer.de*
*www.salutifer.de*



# Գերմանիա՝ նկարներով











# Ծանուցում

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004 թվականի դեկտեմբերի 14-ից ՀՀ ԱԺ ընդունած եւ ընթացիկ տարվա հունվարի 14-ից ուժի մեջ մտած «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ մաքսային պետական կոմիտեն արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին այսուհետեւ հնարավորություն է ընձեռում անցում կատարել մաքսային ձեւակերպումների իրականացման առավել քաղաքակիրթ գործընթացի, ինչը նրանց թույլ կտա անմիջապես գրասենյակից լրացնել եւ տարածաշրջանային մաքսատներին ուղարկել մաքսային հայտարարագրերը՝ տնտեսվարող սուբյեկտ-մաքսավոր շփումը հասցնելով նվազագույնի:

Մաքսային հայտարարագրման այս նոր եղանակի վերաբերյալ առավել հանգամանալից տեղեկություններ ստանալու նպատակով ՀՀ քաղաքացիները կարող են դիմել ՀՀ ՄՊԿ տեղեկատվական հոսքերի կարգավորման վարչություն՝ Ադ. Իսակովի 10 հասցեով կամ զանգահարել 52-61-87 հեռախոսահամարով:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի** խմելու տնտեսական նպատակով ստորերկրյա ջրաղբյուրներից 100 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Գործունեությունից առաջացած կեղտաջրերը թափվում են քաղաքային կոյուղու կոլեկտոր եւ Հրազդան գետ:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԾՁԲ-05/73» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Սպանդարյանի հարկային տեսչության կարիքների համար «Վարչական շենքի սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 625 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» Հ/Հ 247010010343 «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Վ. Հովհաննիսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող՝ 10-րդ աշխատանքային օրը, ժամը 10.00-ին:

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA
LOG ON TO www.azg.am

## ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

### Շինվերանորոգման աշխատանքներ

*30 սեպտեմբերի 2005 թ.*

1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հրավիրում է բոլոր իրավասու շինարարական կազմակերպություններին մասնակցելու Տերյան 74 հասցեում գտնվող ուսումնական տարածքի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացման մրցույթին:
2. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնց վերջին 2 տարվա շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը 50 մլն ՀՀ դրամից պակաս չէ:
3. Մրցութային փաթեթները եւ բացատրագրերը կարելի է ձեռք բերել ստորեւ նշված հասցեով՝ ներկայացնելով շինարարական լիցենզիայի պատճենը:
4. Վերանորոգման աշխատանքների գնային առաջարկները նշել միայն ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի:
5. Հայտերը պետք է ուժի մեջ մնան բացման օրվանից 30 օրվա ընթացքում եւ ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ ***մինչեւ 2005 թ. հոկտեմբերի 7-ը, ժամը 16:30,*** հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Տերյան 74, հեռ՝ 522839, 564177:
6. Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2005 թ. հոկտեմբերի 7-ին, ժամը 17:00-ին, «Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի գրասենյակում՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

armentel
mobile

Եկեք խոսենք

# ԱՌԱՋԱՐԿ «ԱՐՄԵՆՏԵԼ»-Ի ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՊԻ ԲԻԶՆԵՍ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

5 եւ ավելի կապուղիների առկայություն
1 հաշվեհամարի վրա

| | |
|---|---|
| Երաշխիքային *(6 ամիս լրանալուց հետո կօգտագործվի բաժանորդի վարձավճարները մարելու համար)* | 18000/ գին |
| Միացման վճար | 2400 / գին |
| Ամսական վճար | 2800 / գին |
| Ռոմինգի երաշխիք *(Ռոմինգ ծառայությունն ակտիվացվում է անվճար կրեդիտ քարտի առկայության դեպքում)* | 99000/ գին |

Ռոպեավճար *շուրջօրյա*

| | |
|---|---|
| ✓ բաժանորդների փակ խումբ ընկերության ներսում | 27 |
| ✓ դեպի «ԱրմենՏել» -ի բջջային ցանց | 35 |
| ✓ դեպի VivaCell | 35 |
| ✓ դեպի «ԱրմենՏել»-ի ֆիքսված հեռախոսացանց | 35 |
| կարճ հաղորդագրություն (SMS) | 16 |

Սակագները ներկայացված են ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ

| Զեղչեր՝ կազմակերպության ամսական վճարումներից ելնելով | Զեղչերը վերաբերում են յուրաքանչյուր խմբին |
|---|---|
| 0 մինչև 100,000 դրամ | 0% |
| 100,000 + մինչև 250,000 դրամ | 2% |
| 250,000 + մինչև 500,000 դրամ | 3% |
| 500,000 + մինչև 1000,000 դրամ | 4% |
| 1,000,000 + մինչև 1,500,000 դրամ | 6% |
| 1,500,000 + մինչև 2,000,000 դրամ | 8% |
| 2,000,000 + մինչև 2,500,000 դրամ | 10% |
| 2,500,000 + մինչև 3,500,000 դրամ | 12% |
| 3,500,000 + մինչև 5,000,000 դրամ | 15% |
| 5,000,000 + դրամ | 20% |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Հակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 30.09.2005, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Գինդ» տպագրատանը: